արտասուքի գիշեր։ Ո՛չ, այժմ վանքի մէջ հայ սիրտը աւելի հանգիստ պիտի բաբախէ, քան թէ աշխարհային կեանքում։ Թոյլ տուէք ցանկալ Ձեզ յաջողութիւն ընտրած ճանապարհի վրայ, թոյլ տուէք Ձեզ յայտնել, որ Դուք մենակ չէք, որ Ձեզ շատերն են հասկանում, թոյլ տուէք վերջապէս եւ յուսալ, որ Ձեր օրինակը առանձնացած չի մնալ, որ Ձեր կրտսեր ընկերներից շատերն էլ կը հետեւեն Ձեզ, համոզուած լինելով, որ այժմ միակ ասպարէզ, որտեղ անմիջապէս կարելի է օգնել ամեն տեղի հայերին, այդ՝ անկախ հոգեւորականի ասպարէզն է։ Այո՛, պարոններ, առանց անձնազոհութեան երբէք ո՛չ մի գործ չի կարող կատարուել։

Եւ տայ Աստուած որ 1901 թուականին, երբ կատարուելու է մեր քրիստոնէութեան 1600-ամեակը, առաջին քրիստոնեայ ազգի յոբելեանը, տայ Աստուած այդ թուականին ճեմարանը տեսնէ իրան աւելի մօտեցած իւր նպատակներին, և մեզ ամէնքիս սիրելի Վեհափառ Տ. Մակար Սրբազնագոյն Կաթողիկոսի սիրտը ամբողջ ազգի սրտի հետ ուրախանայ, նկատելով թէ իզուր չեն անցել այն զոհաբերութիւնները, որ նրանք արել են այս հիմնարկութեան համար։ Ուրեմն տպասենք 1901 թուականին։

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԵՑԵԱՆՑ։

1889 թ. Սեպտեմ. 30ին

ՊԱՇՏՕՆԱԿԱՔ.

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 15 սեպտ. ընդ համարաւ 470 յանուն բարեպաշտօն եղբարց Թումանեանց Դավրիժեցւոց՝ յարգելեացն Սարգսի, Զաքարիայ, մահտեսի Սիմէօնի և Խաչատրոյ, որով օրհնէ զկեանս Նոցին բարեպաշտութեանց և յայտնէ զգոհունակութիւն սրտի իւրոյ վասն կատուցանելոյ ի սեպհականութենէ իւրեանց ի գաւթի Ս. Սարգիս եկեղեցւոյ Հայոց Լիլաւայ թաղին Դավրիժոյ զերկայրկեայ ընդարձակ և յարմարաւոր մեծածախս շինութիւն ի սեպհականութիւն յիշեալ եկեղեցւոյն և ի կրթութիւն մանկանց Դավրիժաբնակ համազգեաց իւրեանց։

Կոնդակ Վեհափառ. Հայրապետի ազգիս ի 18 սեպտ. ընդ համարաւ 473, յանուն Սինօդի Ս, Էջմիածնի, որով պատուիրէ

կարգել անդամ վանական Կառավարութեան զբարեշնորհ Ղեւոնդ վարդապետն Յովակիմեան և զԱհակ Աբեղայն Ամատունի, որպէս զի գործակցութեամբ ընդ բարեշնորհ Ներսէս վարդապետի Հայկազունւոյ յաջողապէս յառաջ վարեսցեն նոքա զԱթոռային գործս և կառավարութիւնս։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի տզգիս ի 22 սեպտեմ. ընդ համարաւ 479 յանուն Սինոդի, որով ծանուցանէ թէ՝ յօրէ առնտի ամբառնալոյ իւր ի գահ Հայրապետութեան ամենայն Հայոց՝ ցայսօր ժամանակի անձամբ անձին հասու եղեալ ընթացից ուսման և դաստիարակութեան մանկանց Հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, միշտ բաւականութեամբ սրտի վիճիթարեալ է յոյժ ընդ յառաջադիմութիւն աշակերտելոցն յուսմունս գիտութեանց և լեզուաց՝ ըստ ծրագրին սահմանելոյ յինքենէ, ասն այս քաջալերական արդիւնք ուսմանց Հոգևոր Ճեմարանի հարկադրեն զՆորին Սրբութիւնն միշտ և հանապազ խոկալ ի լցուցանել զամենայն կարևորագոյն պիտոյս Նորին, յորոց ի կարգի համարի նախապատրաստութիւնն այնպիսեաց, որք կրթեալք ի հրահանգս ուսմանց՝ ընդ անմիջական հսկողութեամբ Իւրով, կարեն նուիրել զանձինս ի վարժութիւն այնպիսեաց գիտութեանց, զորս պարտ է մուծանել հետզհետէ ի ծրագիր ուսմանց Ճեմարանիս։

Առ այս նպատակ հաճոյ եղև Նորին Սրբութեան ընտրել ի միջոյ ուսումնասէր որդեգրաց Ճեմարանիս՝ զմիաբանս Մայր Աթոռոյս՝ զշնորհունակ սարկաւագունս՝ զԿարապետն Տէր Մկրտչեանց և զԳէորգն Զօրէ քչեանց առ ի առաքել զնոսա ծախսաւք Տաճի Թագի Ս. Գէորգ եկեղեցւոյ Հայոց Տփխիսոյ ի հայմալարանական քաղաքս Եւրոպիոյ ի կատարելագործութիւն յուսումնական առարկայս՝ ըստ առանձին հրահանգաց Իւրոց։

—

Նորին Վեհափառութիւնն Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց, անցեալ սեպտեմբերի 15ին բարեհաճեցաւ շնորհաւորել Նորին

Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխան Միխայել Նիկոլայեվիչին զՈվկասեան Ցուցահանդիսի բացումն ի Տփխիս հեռագրաւ.—

«Ի սրտէ ուրախ եմ վասն բարեյաջող ժամանման Ձեր՝ Ձեզք բարերարեալն և յոյժ սիրելի երկիրն։ Շնորհաւորելով Ձեզ զբացումն Կովկասեան ցուցահանդիսի ընդ բարձր հովանաւորութեամբ Ձերով, օրհնեմ զՁեզ և զամենայն գործակիցս Ձեր վասն կարգաւորելոյ զայնս նոր գրաւական ծաղկման ամենայն ճիւղից տշիւառանաց և ընդհանուր բարօրութեան բազմացեղն Կովկասի. նախախնամութիւնն երկնից հովանաստի ի վերայ Ձեր և ամենից աշխատաւորաց, որք ի գործ եդին զՋանս իւրեանց վասն զարգացուցանելոյ զպէտսպէս շնորհս պարգևեալս նոցա յԱստուծոյ»։

Նորին Կայսերական Բարձրութիւնը բարեհաճեցաւ պատասխանել Նորին Սրբութեանը հետևեալ հեռագրով.

«Ի սրտէ շնորհակալ եմ Ձեր սիրալիր հեռագրի և նորանոր արտայայտած ջերմ զգացմանցդ համար»։

ԲԱՂՈՒԱՆԻ ՑՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Մկրտիչ քահանայն Ղշլաղ գեղջ թեմին Ղարաբաղու, որ արգելեալ էր ի քահանայագործութենէ, ի 1887 ամէ հետէ, ի պատճառս վատ ընթացքին հակառակ քահանայական կոչման իւրոյ՝ ի գայթակղութիւն ժողովրդոց, կրկնակի խնդրագրաւ իւրով դիմելով ի շնորհս Նորին Վեհափառութեան, յայտնելով զղջումն վասն սխալանացն իւրոց, արժանացաւ ներողութեան Նորին Վեհափառութեան, ուստի և Սրբազան Սինոդն ըստ օրագրութեան իւրոյ որ ի 28ն յուլ. անցելոյ հրամայեաց Վիճակային Ատենին Ղարաբաղու արձակել զնա ի պատժոյն և թոյլ տալ նմա վարել զպաշտօն քահանայութեան։